

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....	3
2. Սովորողների մեջ ինքնուրույնության զարգացումը կենսաբանություն առարկայի դասավանդման ընթացքում.....	6
3. Ինքնուրույն աշխատանքի տեսակները.....	8
4. Եզրակացություն.....	18
5. Օգտագործած գրականության ցանկ.....	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշակերտի վարքի ու գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունը ոչ միայն նրա տարիքային առանձնահատկությունների հետևանք է, այլև այն բանի, որ դպրոցականի մեջ չի զարգացվում ու ամրապնդվում ուսումնական գործունեության մոտիվացիան: Ուսումնական պրոցեսը, դառնալով առօրեական, սովորական՝ դադարում է գաղտնիքներ ու անսպասելի նորություններ պարունակել: Միջնակարգ դպրոցում ծրագրային թեմաների մեծագույն մասը կրկնվում է երեք աստիճաններում՝ տարրական, միջին և բարձր դասարաններում: Միջին և բարձր դասարաններում սկսում են ավելի շատ հակասություններ առաջ գալ ուսուցիչների և աշակերտների միջև:

Միջին դպրոցական տարիքի երեխան, ձեռք բերելով գիտելիքների որոշակի պաշար, ինչպես նաև ինքնաճանաչման և ինքնահաստատման ձգտում, հոգեբանորեն հակվում է ինքնագործունեության, իր անձնային ինստիտուտների և արժեքների հասարակական ճանաչմանը: Այստեղից էլ կարելի է նշանակություն են ստանում կոլեկտիվում դպրոցականների, ինչպես և ուսուցչի և աշակերտի միջև աշակերտական և օպտիմալ փոխհարաբերությունների ստեղծումը և ուսումնական պրոցեսում ուսուցչի գործունեության սոցիալ-հոգեբանական ազդեցության բարձրացումը:

Աշակերտի անձի նկատմամբ ուսուցչի անուշադիր ոչ բավարար հարգալից վերաբերմունքը աշակերտի մեջ առաջացնում է ուսուցչին հակադրվելու, նրա հաղորդած ինֆորմացիայի առջև իր իմացության <<դռները>> փակելու հակվածություն: Բնականաբար, այդ պայմաններում ուսուցիչն անկարող է լուծել նաև դաստիարակչական բնույթի որևէ խնդիր: Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների մասին[1].

Մարդու գիտակցության մեջ պահանջմունքից բացի առաջ են գալիս ու ձևավորում այնպիսի կարևոր բարոյահոգեբանական արժեքներ, ինչպիսիք են նպատակը, երազանքը, իդեալը, երջանկությունը, ինքնուրույնություն, որոնք հսկայական նշանակություն են ունենում նրա վարքի դրսևորման համար և որպես

դրդապատճառներ շատ հաճախ ժամանակավորապես ճնշում են կենսական պահանջմունքները և դառնում գործունեության նպատակ կամ մոտիվ:

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Ուսուցման կազմակերպման ընթացքում բավականին կարևոր գործընթաց է սովորողների մեջ ինքնուրույնության զարգացումը: Սովորողների ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը:

Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Աշակերտների ինքնուրույն գործունեությունը կարելու է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներում: Սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Ինքնուրույն գործունեության նպատակը նոր սերնդին կյանքին, նախապատրաստելն է: Ինքնուրույն գործունեության նպատակը բոլոր ժամանակներում որոշվում է հասարակական պահանջներով, գիտատեխնիկական առաջընթացի զարգացումով, մանկավարժության տեսության եւ պրակտիկայի զարգացման մակարդակով, ուսումնական հաստատություններով եւ ուսուցիչների զարգացման մակարդակով: Ինքնուրույն գործունեության նպատակի սահմանման հարցը որքան հին է, այնքան էլ արդիական:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ :

1. Աշակերտների ինքնուրույն գործունեության նպատակի սահմանումն է արդի ժամանակաշրջանում՝ կարելուրելով այն արժեքավոր մտքերը, գաղափարները, որոնք այսօր կարելի է արդյունավետ կիրառել մանկավարժության տեսության մեջ եւ պրակտիկայում :
2. Սահմանել ռազմավարություն, որը կնպաստի թեմայի համակողմանի ուսումնասիրությունը:
3. Թեման ուսումնասիրելուց և վերլուծելուց հետո սովորողի հետագա անելիքները նախանշելու և զարգացման ուղիները կանխատեսելու կարողությունների կատարելագործում:
4. Զարգացնել սովորողի մոտ համեմատելու հմտությունը:

5. Սովորողի ուսումնական, իմացական, ստեղծագործական ներուժի խթանում, հետազոտական ունակությունների կատարելագործման և զարգացման, հետազոտական հմտությունների ձեւավորման միջոցով:

ԽՆԴԻՐՆԵՐԸ:

1. Բնութագրել աշակերտների ինքնուրույն գործունեության նպատակը դպրոցում:
2. Բնութագրել աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը:
3. Բացորոշել աշակերտների ինքնուրույն աշխատանքների դասակարգման հատկանիշները:
4. Աշակերտների՝ դասապռոցեսի ներգրավվածության մակարդակի բարձրացման գնահատում:
5. Արդյունքների համեմատական վերլուծություն:
6. Երեխայի ստեղծագործական երևակայության զարգացում:
7. Գեղագիտական ճաշակի զարգացում:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշակերտը պետք է գիտելիքներ ստանա ոչ թե պատրաստի ձևով, այլ դրանք ձեռք բերի ինքնուրույնաբար՝ որոնողական, հետազոտական, համագործակցային աշխատանքի արդյունքում: Ինքնուրույն գործունեության զարգացմանն են նպաստում համագործակցային ուսուցումը, ճանաչողական-որոնողական աշխատանքները, խաղային տեխնոլոգիաներով ուսուցման կազմակերպումը, ինքնագնահատման կարողությունների զարգացումը[2]: Կարևորելով ինքնուրույն հետազոտական աշխատանքների դերը կրտսեր դպրոցականի կարողունակությունների ձևավորման հարցում, անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների՝ մեթոդապես ճիշտ կազմակերպմանը[3]: Սովորաբար հմտություններ սովորողները ձեռք են բերում դասարանում համագործակցային ուսուցման մեթոդով աշխատելիս: Սովորողը սովորում է ճիշտ տնօրինել իր ժամանակը, նաև կառավարել իր հույզերը, իսկ ինքնամոտիվացիան շատ կարևոր է այդ աշխատանքում:

Սովորողների մեջ ինքնուրույնության զարգացումը կենսաբանություն առարկայի դասավանդման ընթացքում

«Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով լավ գիտի, թե ինչ պետք է իմանան իր աշակերտները և ինչ ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին»:

Վ. Ա Սուխոմլինսկի

Իքնուրույն են կոչվում այն աշխատանքները, որոնք աշակերտները կատարում են ուսուցչի նախաձեռնությամբ կամ սեփական նախաձեռնությամբ: Որպեսզի սովորողները հմտանան ինքնուրույն մտավոր աշխատանք կատարելու մեջ, անհրաժեշտ է, որ սկզբնական փուլում դրանք իրագործվեն ուսուցչի նախաձեռնությամբ: Սովորողների ինքնուրույն աշխատանքների կատարումները պետք է ունենան փաստեր, օրենքներ, օրինաչափությունները ինքնուրույնաբար ճանաչելու ստեղծագործական գործունեությունը զարգացնելու ուղղվածություն:

Որպեսզի սովորողները կատարեն ինքնուրույն աշխատանքներ, անհրաժեշտ է, որ նրանք ունենան իրենց գործողությունները, գործելակերպը հստակ իրագործելու պատկերում: Նրանք պետք է որոշակիորեն իմանան թե ինչ աշխատանք են կատարելու, ինչ նպատակ է հետապնդում այն, ինչ խնդիրներ են լուծելու, երբ են սկսելու աշխատանքը, երբ են ավարտելու, ինչ մեթոդներ, հնարներ են կիրառելու, ինչպես են վերլուծելու ստացված արդյունքները եւ այլն:

Այդ ամենն իրականացնելու համար ցանկացած ինքնուրույն աշխատանք կատարելուց առաջ սովորողները պետք է ունենան օպերատիվ պլաններ, որտեղ արտացոլված լինեն, թե ինչը երբ կատարել, երբ ավարտել ու ամփոփել, ներկայացնել քննարկման:

Կան ինքնուրույն աշխատանքի տարբեր տեսակներ: Օրինակ

1. Նոր գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույն աշխատանք.
2. Նոր կարողություններ եւ հմտություններ ձեռք բերելու ինքնուրույն աշխատանք.

Ինքնուրույն աշխատանքներ կազմակերպելիս շատ կարևոր է առանձին սովորողների գիտելիքների խորացումը, գործնականում գիտելիքներդ կիրառելու կարողության, ինքնուրույն մտածելու ունակության, լարված աշխատելու սովորույթի, խոչընդոտներն ու դժվարությունները հաղթահարելու ընդունակությունների ձևավորում[4]:

1. Կազմակերպչական՝ սա երեխաների աշխատանքային միջավայրի ախապատրաստումն է:
2. Բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում:
3. Նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ եւս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, շխանգարել իր ընկերներին, պահպանել լռություն եւ կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել եւ այն:
4. Կողմնորոշիչ. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը եւ այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ եւ գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար:
5. Հիմնական փուլ. Այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:
6. Ամփոփիչ փուլ. Այս փուլում կատարվում է անցուդարձ: Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության եւ ստուգման ձևերի մասին: Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական

երաշխավորություններ , հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու եւ սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները: Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների եւ աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, եւ վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը եւս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին[5]:

Ինքնուրույն աշխատանքի տեսակները .

I` ըստ ուսումնական նպատակների

1. Հիմնարար գիտելիքների կրկնության եւ նոր նյութի ընկալմանը նախապատրաստող
2. Նոր նյութի ուսումնասիրությանը նպաստող
3. Գիտելիքները համակարգող
4. Որոշակի կարողություններ զարգացնող
5. Ստուգող, վերահսկող

II Ըստ ճանաչողական գործունեության բնույթի

1. Կառուցողական
2. Ստեղծագործական – հետազոտական

III Ըստ կազմակերպման ձևի

1. Ընդհանուր ճակատային, երբ բոլոր սովորողները կատարում են միեւնույն աշխատանքը:

2. Խմբային, երբ սովորողների տարբեր խմբեր աշխատում են տարբեր առաջադրանքների վրա:
3. Անհատական, երբ սովորողներից յուրաքանչյուրն աշխատում է հատուկ առաջադրանքների վրա:

IV Ըստ ինքնուրույն աշխատանքի ընթացքում դիդակտիկ նյութերի կիրառության

1. Աշխատանք դասագրքով, տեղեկատու գրականության շուրջ բառարաններ, հանրագիտարաններ եւ այլն:
2. Շարադրություններ ըստ հենակետային բառերի, նկարների շուրջ եւ այլն:
3. Դիտումներ եւ գործնական աշխատանքներ:
4. Աշխատանք բաշխիչ նյութերի կիրառման
5. Գրաֆիկական աշխատանքներ
6. Ինքնուրույն աշխատանքներ, որոնք կախված են դիդակտիկ նյութերի

V Ըստ կատարման տեղի

1. Դասարանում,
2. Արտադասարանական կամ արտադպրոցական ուսումնական միջոցառումների ժամանակ
3. Տանը:

Իսկ ի՞նչ ծավալով եւ ի՞նչ բնույթի առաջադրանքներ են անհրաժեշտ առաջադրել ինքնուրույն կատարելու համար: Այսպես.

1. Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում մենք առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմի ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան ընդհանուր է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթացքում ուսուցիչը կարող է հասկանալ, թե ինչ տարբեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը:

2. Սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության համար նախատեսված առաջադրանքների բնույթը անհրաժեշտ է աստիճանաբար բարձրացնել:
3. Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:
4. Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար:
5. Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված առաջադրանքները ցանկալի է, որ աշակերտներից պահանջեն կամային ջանքեր:
6. Ինքնուրույն աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում: Միայն այդ դեպքում ինքնուրույն աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձեռավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը:
7. Ցանկալի, որ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին:

Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ:

Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի:

Այնուհետև անհրաժեշտ է առաջադրել նույնատիպ առաջադրանքներ: Հետո կարելի է առաջարկել առաջադրանքներ՝ չափազանց համառոտ հրահանգ տալով: Վերջին փուլում անհրաժեշտ է առաջարկել առաջադրանքներ ամբողջովին ինքնուրույն կատարման համար: Այս փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ[6]:

Վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը դպրոցականների ուսուցման գործընթացում:

Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը ուսումնական աշխատանքի ձև:

Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկությունը և արգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար: Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն:

Դասավանդման երեք կարևոր հիմնախնդիրներից առաջինը՝ ինչ սովորեցնելը, ծրագրային նյութի միջոցով իբրև ճանաչողական-իմացական արժեքը՝ գիտելիք, մատուցվում է սովորողներին, երկրորդը՝ ինչու սովորեցնել, կրթության բովանդակությունը կազմող կարողություններ, հմտություններ և արժեքային համակարգ բաղադրիչների միջոցով շեշտադրում է ինչ սովորեցնելու նպատակը, իսկ երրորդը՝ ինչպես սովորեցնելը, պայմանավորում է դասավանդման կերպը՝ եղանակը, միջոցներն ու ձևերը, այն, ինչ կազմում է ուսուցման մեթոդաբանությունը[7]:

Հանրակրթական և բարձրագույն դպրոցի վերակառուցումը նոր խնդիրներ է առաջադրում կենսաբանության դասավանդման դրվածքի, սովորողների ինքնուրույն աշխատանքի բարելավման ուղղությամբ: Այս տեսակետից ավելի լուրջ ուշադրություն է դարձվում լաբորատոր պարապմունքներին, որոնք կենսաբանական առարկաների հիմքն են: Նպատակը կատարելագործել սովորողների ինքնուրույն աշխատանքը, մշակել կենսաբանական մտածողություն, մտահանգումներ և

ինքնուրույնդատողություններ անելու ընդունակություն: Այն ապահովում է միջառարկայական և ներառարկայական կապի շատ հարցեր[8]:

Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն մի կողմից արդեն ձեռք բերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու սկստիվությունը: Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը:

Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար:

Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված առաջադրանքները ցանկալի է, որ աշակերտներից պահանջեն կամային ջանքեր:

Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման ոլորտում, պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել:

Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի: Կենսաբանության ուսուցիչների խնդիրն է ուսուցման պրոցեսում ապահովել մատուցվող նյութի մատչելիությունը, կենսաբանական դրույթները կապել կյանքի հետ, աշակերտների մեջ սեր զարգացնել ուսման և աշխատանքի նկատմամբ, նպաստել նրանց ինքնուրույնության,

տրամաբանական մտածողության զարգացմանը: Նշված պահանջների իրաանացումը ուսուցչից պահանջում է դասի վարման մեթոդների կատարելագործում:

Ուսուցման պրոցեսը ճիշտ կազմակերպելու համար ուսուցիչը նախ պետք է ծանոթանա աշակերտների հետ, որոշի նախինում նրանց ձեռք բերած գիտելիքների աստիճանը, խառնվածքը, հետաքրքրասիրությունների ոլորտը, հմտություններն ու կարողությունները: Սովորաբար աշակերտն աշխատում է ուսուցչից թաքցնել իր թերի կողմերը՝ չիմացածը, չըմբռնածը, բնավորության գծերը, որի հետևանքով դժվարանում է մանկավարժի աշխատանքը: Որքան աշակերտ, այնքան զենտտիպ անհատականություն, հետևաբար և նույնքան անհատական մոտեցում: Սակայն մանկավարժի համար գոյություն ունեն այդ բարդությունները հաղթահարելու, աշակերտների հոգեկան ու մտավոր աշխարհի վրա ներգործելու բազմազան ձևեր ու հնարներ:

Բնագիտական առարկաների շարքում կենսաբանությունը թերևս ամենադինամիկն է և արագ փոփոխվողը, ինչը պայմանավորված է մի կողմից կենսոլորտում տեղի ունեցող գլոբալ փոփոխություններով, և մյուս կողմից՝ կենսաբանության տարբեր ճյուղերի արագ զարգացմամբ: Բնական էկոհամակարգերի հավասարակշռության խախտումները, փոթորիկները, հրդեհները, անտառների կրճատումը, անապատացումը, կլիմայի գլոբալ տաքացումը բնապահպանության այն խնդիրներից են, որոնք ծառացել են մարդկության առջև: Այս խնդիրներից են նաև անհայտ հիվանդությունները և համաճարակները, մոդիֆիկացված բույսերի և կենդանիների ստացումը և տեսակների կլոնավորումը: Կենսաբանության դասավանդման նպատակը սովորողների մոտ այս հարցերի մասին արժեքային համակարգի ձևավորումն է: Սովորողների մոտ կարողությունների և հմտությունների, ինչպես նաև ինքնուրույն, անհատական մտածելակերպի ձևավորումը և զարգացումը պահանջում է ուսուցման ժամանակակից միջոցների կիրառում: Հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը նոր հնարավորություն է ընձեռում գիտելիքները ամրապնդելու, ստեղծագործական մտածելակերպ զարգացնելու, բնության տարբեր պրոցեսները և երևույթները մոդելավորելու համար, որը լայն կիրառություն ունի բնագիտական տարբեր ոլորտներում:

Ուսուցման պրոցեսում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը նպաստում է մտածողության զարգացմանը տարբեր խնդիրների լուծման հարցում, ստեղծում է բնական երևույթների և պրոցեսների մոդելավորման հնարավորություն, ինչը օգնում է աշակերտներին ընկալել շրջակա աշխարհը ամբողջությամբ:

Կենսաբանության դասերին կիրառվող մեթոդները բազմազան են՝ գնումը, փորձը, լաբորատորիայի պրակտիկ աշխատանքը, տրամաբանական խնդիրների լուծումը, տեսաֆիլմերի, աղյուսակների և նկարների դիտումը, սովորողների զեկույցներն ու ռեֆերատների շարադրումը, գիտահետազոտական աշխատանքներին մասնակցությունը և այլն: Այսօր առավել ևս դասն արդիական է դարձել՝ ուսումնաստեխնիկական միջոցների շնորհիվ աշակերտներն ինքնուրույն աշխատանքի հնարավորություն են ստացել: Համակարգչի միջոցով համացանց մտնելու հնարավորությունն օգտագործելու դեպքում ուսուցիչն աշակերտին տալիս է նոր գիտելիքներ ձեռք բերելու, տեղեկատվությունը սեփական, ինքնուրույն մտավոր գործունեության ճանապարհով ցուցադրելու և կիրառելու առիթ:

Այսօր օրախնդիր է ոչ միայն այն, թե ինչ սովորեցնել, այլև այն, թե ինչպես սովորեցնել: Անհրաժեշտ է սովորել սովորեցնել: Այդ նպատակով կիրառվում են ուսուցման նոր պահանջումներին համապատասխան տեխնոլոգիաներ և մեթոդներ[9]:

Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության միջոց է, հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին, գիտելիքների ձեռքբերմանը, կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

Իմունիտետ

Դասի նպատակը՝ աշակերտներին ծանոթացնել իմունիտետի ձևավորման, պահպանման և ամրապնդման և անհրաժեշտությանը, որպես օրգանիզմի անհատական պաշտպանական հատկանիշ:

Աշակերտը կիմանա՝

1. Ինչպե՞ս է արտահայտվում օրգանիզմի պաշտպանական ռեկցիան:
2. Ի՞նչ է հակամարմինը:
3. Ի՞նչ է իմունիտետը:

4. Իմունիտետի ինչպիսի՞ ձևեր կան:
5. Ի՞նչ է իմունային անբավարարությունը:
6. Ի՞նչ է ալերգիան:

Կկարողանա՞

1. Մեկնաբանել արյան ֆունկցիաները:
2. Տարբերակել իմունիտետի ձևերը:
3. Մեկնաբանել իմունային անբավարարությունը և ալերգիան:

Կարժևորի՞

1. Օրգանիզմի պաշտպանական ռեակցիան որպես հարմարվածություն:
2. Բժշկության դերը մարդու իմունային համակարգի ուսումնասիրության և արհեստական իմունիտետի ձևավորման գործում:
3. Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշից պաշտպանվելու կարևորությունը:

Դասի տիպը՝ համակցական, խառը:

Ուսուցման մեթոդը՝ հետազոտական ,պրոբլեմային

Անհրաժեշտ նյութեր՝ դասագիրք, պաստառներ, նկարներ, աղյուսակներ, տեսացուցադրում:

Դասի ընթացքը՝ Անդրադառնալ նախորդ դասի հանձնարարականներին: Վերհիշել արյան բաղադրությունը, կազմը և ֆունկցիաները:

Խթանման փուլ՝ ինքնագնահատման աղյուսակի միջոցով անդրադառնալ օրգանիզմի ներքին միջավայրի բաղադրությանը, արյան գործառույթներին, արյան ձևավոր տարրերի և պլազմայի պաշտպանական ֆունկցիաներին: Մեկնաբանել արյան փոխներարկումը՝ կապված պաշտպանական ռեակցիայի ապահովման տեսանկյունից: Գաղափար տալ վարակների մասին:

Իմաստի ընկալման փուլ՝ մեթոդ <<ուղղորդող ընթերցանության>> ,<<բանավեճ >>.

1. Հանձնարարել կարդալ դասի առաջին և երկրորդ պարբերությունները, և պատասխանել հետևյալ հարցերին: Օրգանիզմում պաշտպանական դեր կատարող ի՞նչ օրգաներ և բջիջներ գիտեք: Ի՞նչ են վարակը և հակամարմինները:

2. Կարդալ դասի <<Իմունիտետը>> ենթավերնագիրը և պասասխանել հետևյալ հարցերին:

Ի՞նչ է իմունիտետը:

Իմունիտետի ի՞նչ տեսակներ գիտեք:

Ի՞նչով են միմյանցից տարբերվում բնածին և ձեռքբերովի իմունիտետները:

Ո՞րն է ակտիվ և պասիվ արհեստական իմունիտետը:

3. Կարդալ դասի շարունակությունը, և պատասխանել հետևյալ հարցերին:

Ի՞նչ է իմունային անբավարարությունը:

Ի՞նչ է ակերզիան:

Կշռադատման փուլ

Լրացնել աղյուսակը

Իմունային համակարգի բնութագիրը

Իմունիտետի ձևերը	Ծագումը	Նշանակություն	Իմուն համակարգի օրգանները	Տեղը օրգանիզմում	Ֆունկցիան
Բնական ա.բնածին					
Բ. ձեռքբերովի					
Արհեստական					
Ա. ակտիվ					
Բ. պասիվ					

Խթանման փուլ՝ << ինքնազնահատման աղյուսակի>> կիրառումը հնարավորություն է տալիս ինքնուրույն ինչ-որ բան սովորել: Սովորողներին զինում է ուսումնական գործունեություն ծավալելու կարողություններով, խթանում նրանց ինքնազարգացումը, ինքնավերլուծությունը, ինքնաստուգումն ու ինքնազնահատումը: Սովորողների ինքնուրույն գործունեության հմտորեն կազմակերպումը կօգնի նրանց յուրացնելու առարկայական անհրաժեշտ

գիտելիքներ, տիրապետելու համապիտանի ուսումնական կարողություններին եւ պատրաստ լինելու ստեղծագործական ակտիվ ուսումնառության:

Իմաստի ընկալման փուլում - <<ուղղորդող ընթերցանության>> և, <<բանավեճ >>. մեթոդները կիրառելիս տեքստը ընթերցվում է ոչ թէ ամբողջությամբ, այլ տրամաբանական ավարտ ունեցող հատվածներով: Յուրաքանչյուր հատված ընթերցելուց հետո ուսուցչի ուղղորդող հարցերով վերլուծության է ենթարկում ընթերցվածը, կատարվում են մեկնաբանություններ և կանխատեսումներ, որը նպաստում է ինքնուրույնության զարգացմանը:

Եզրակացություն

Մենք մեր առաջ նպատակ էինք դրել աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել իրենց կողմից ձեռք բերված գիտելիքները: Եկանաք այն եզրակացմանը, որ ժամանակակից մեթոդները առավել քան արդյունավետ են, ունեցանք հետաքրքիր դասեր քննարկումներ, որտեղ աշակերտների ներգրավվածությունը բավականին բարձր մակարդակի վրա էր՝ ի համեմատություն ավանդական մեթոդներով իրականացվող դասերի: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան: Ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

Այսպիսով գիտելիքների յուրացման մասով ավելի նպատակային կլինի դասընթացները իրականացնել ժամանակակից մեթոդներով, իրականացնել նորովի, նոր շունչ հաղորդելով եւ դասին եւ մեթոդին:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1.[Մ.Հ. ՄԿՐՏՉՅԱՆ ՈՒսուցիչ -աշակերտ փոխհարաբերությունների մասին. ԵՐԵՎԱՆ-1979. էջ9]
- 2.[Նախաշավիղ 2.2017 էջ]
- 3.4ow3NbmHhLvHc]:[https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_11.html?fbclid=IwAR10i3b-BICBjGD_Q1HrBCE7nXctiEuXqMxJl7rQIvPtn]
- 4.[Մանկավարժություն Գիտամեթոդական վերլուծական ամսագիր էջ 19]:
- 5.[ՑՆԱԽԱՇԱՎԻՂ 2017]:
- 6.<https://multiurok.ru/files/ink-nowrowynowt-yan-dzevavorowme.html>]:
- 7.[էջ 3 ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ ք.ՎԱՆԱՁՈՐ 2008թ.]
8. [էջ 3 Բջջաբանություն գենետիկա սելեկցիայի հիմունքներով;Ռ. Հ. ԵԴՈՅԱՆ]
9. [կենսաբանություն ուսուցչի ձեռնարկ Տ.Վ.Թանգամյան էջ10]